

«Ձգեցէք որ մանուկները ինծի գան, արգելք մի՛ ըլլաք անոնց,
որովհետեւ այդպիսիներուն է Աստուծոյ արքայութիւնը» Մարկոս 10.14:

Հայաստանեայց Եկեղեցւոյ
Սուրբ Յակոբ
Կիրակնօրեայ Դպրոցի Ամսաթերթ

ՄԱՇՏՈՑԻ

ԱՐՁԱԳԱՆԳ

www.sourphagop.org/մաշտոցի_արձագանգ



ԻԸ տարի (28-ամեակ)
2021-ի Տարեկան Բացառիկ

Հաւատք

| Կրօն

| Եկեղեցի

| Լեզու

| Մշակոյթ

Բովանդակություն

| | |
|---|-------|
| Խօսք՝ Հովիի եւ Հոգաբարձութեան | Էջ 3 |
| Մեր խօսքը | Էջ 4 |
| www.sourphagop.org | Էջ 5 |
| Հակիրճ տեղեկութիւններ 2020-21 տարեշրջանի մասին | Էջ 6 |
| Աշակերտական ներկայութեան տախտակներ | Էջ 8 |
| Ձեռնարկներ եւ արտադասարանային աշխատանքներ՝ Ժամանակագրական շարքով | Էջ 9 |
| Կիրակնօրեայ Դպրոցի 40-Ամեակին Առիթով | Էջ 10 |
| Ներկայացում «Պատանիին Աստուածաշունչը» | Էջ 11 |
| 2021 Ս. Ծննդեան ճրագալոյցի պատշաճեցուած ընթերցումներ մատուցմամբ մեր աշակերտներուն | Էջ 12 |
| Կիրակի օրերու Առաքելական նամակներու ընթերցումներ հայերէն եւ ֆրանսերէն լեզուներով մատուցմամբ մեր ուսուցիչներուն | Էջ 13 |
| Նկարներ՝ Կիրակնօրեայ Դպրոցի 2020-21 տարեշրջանէն | Էջ 15 |
| 2020-21 տարեշրջանի կազմը | Էջ 32 |

ՎԵՐԱՄՈՒՏ

12 Սեպտ. 2021

Ժամը 10:30



ՄՈՒՐԲ ՅԱԿՈԲ ԱՌԱԶ. ՄԱՅՐ ԵՒ ԿԵՂԵՑԻ

Église Arménienne Sourp Hagop Armenian Church

Չորեքշաբթի, 19 Մայիս 2021

Մոնթրեալ

Սիրելի անօրէնութիւն,
ուսուցչական կազմ, ծնողներ, աշակերտ-աշակերտուհիներ
Ս. Յակոբ Եկեղեցւոյ Կիրակնօրեային,
Աստ,

Սիրելիներ,

Համաժպտակին պատճառով, դժուար տարեշրջանն մը եւս անցուցինք:

Սակայն ուրախութեամբ կը հաստատենք, թէ շնորհիւ անօրէնութեանդ եւ ուսուցչական կազմիդ նուիրումին, եւ ծնողներուդ կրօնասիրութեան՝ կարելի եղաւ մատղաշ սերունդին հոգեւոր սնունդի մատակարարումը շարունակել, թէև արգելքներուն պատճառով՝ ոչ այն եռանդով, որով կը յատկանշուի մեր Կիրակնօրեան:

Տարեշրջանը իր լրումին հասաւ: Այս նամակը, որ Ձեր ճիգերը բարձր կը գնահատէ, կը գրուի մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի Համբարձման յաջորդած վեցերորդ օրը, եւ իր առջև ունի Հոգեգալստեան տօնը:

Համբարձման օրը, Յիսուս իր աշակերտներուն ըսաւ, թէ երբ Ս. Հոգին իջնէ իրենց վրայ՝ զօրութեամբ պիտի լեցուին եւ իր վկաները պիտի ըլլան: Իսկ Հոգեգալստեան օրը, իր ճառին սկիզբը, Պետրոս առաքեալ Յովկիի մարգարէութենէն մէջբերում մը կատարեց: Այն մէջբերումէն՝ հետեւեալին կը ներդաշնակուի անօրէնութեանդ եւ ուսուցչական կազմիդ նուիրումը. «...երբ վերջին օրերը գան, - կ'ըսէ Աստուած, - իմ Հոգիս պիտի թափեմ բոլոր մարդոց վրայ. ձեր տղաքն ու աղջիկները իմ պատգամներս պիտի փոխանցեն ձեզի»: Ակնարկուած «վերջին օրեր»ը կը վերաբերին հին ժամանակի աւարտին. Ս. Հոգիին գալստեամբ նոր ժամանակին սկզբնաւորութիւնը ստանձնուած է: Դուք՝ անօրէնութիւն եւ ուսուցչական կազմ՝ նոյն ստանձնումին հաւատարիմ ժառանգորդներն էք: Արդ, կը մաղթենք, որ առողջապահական պայմաններուն բարելւամամբ, յառաջիկայ տարեշրջանը վերագտնէ իր զօրութեամբ լի եռանդը, եւ մանուկներն ու պատանիները հոգեւոր իմաստութեամբ սնանին՝ Աստուծոյ Խօսքին ձեր սպասարկութեամբ:

Լաւագոյն մաղթանքով՝

ՀՈՎԻԷ ԵՒ ՀՈԳԵՐԱՐՈՒԹԻՒՆ

Ս. ՅԱԿՈԲ ԱՌԱՅԱՐԿՈՒՄԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒ

ՄԵՐ ԽՕՍՔԸ

Փառք կու տանք Աստուծոյ, որ այս տարի եւս կրցանք Կիրակնօրեայ Դպրոց ունենալ 32 Կիրակիներ, հակառակ անոր որ Նոյեմբեր 22 2020-էն սկսեալ երկրորդականը միան առցանց շարունակեց իր գործունէութիւնը:

Այս տարի նաեւ 28-րդ տարեդարձն էր մեր ամսաթերթին՝ «Մաշտոցի Արձագանգ»ին եւ Սուրբ Յակոբի տօնին՝ Դեկտեմբեր 2020-ին մեր կայքէջին՝ www.sourphagop.org-ին 20-րդ տարեդարձն էր:

«Ձգեցէք որ մանուկները ինծի գան, արգելք մի՛ ըլլաք անոնց, որովհետեւ այդպիսիներուն է Աստուծոյ արքայութիւնը»:

Յիսուս Քրիստոսի արտասանած խօսքը, որ Հայց. Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու նշանաբանն է, կը փսայ հիմը մեր եկեղեցւոյ պայծառութեան: Այն եկեղեցիները, որոնց մանուկները արգելքներ ունին Յիսուսին երթալու, դատապարտուած են պարպուելու: Յիսուսի այս խօսքերը պէտք է ըլլան հիմը Հայաստանեայց Եկեղեցւոյ մտապատկերին. մանաւանդ Գանատայի մէջ՝ երբ պետութեան կողմէ վարժարաններու մէջ, հայ կրօնական դաստիարակութեան սահմանափակումով, եկեղեցիներուն համար կենսական կը դառնայ հայ քրիստոնէական դաստիարակութիւն փոխանցել նոր սերունդին Կիրակնօրեայ Դպրոցներու միջոցով:

«Ձգեցէք որ մանուկները ինծի գան, արգելք մի՛ ըլլաք անոնց, որովհետեւ այդպիսիներուն է Աստուծոյ արքայութիւնը»: Ասկէ 92 տարիներ առաջ, Կիլիկիոյ Սահակ Բ. Խապայեան Կաթողիկոս իր իմաստութեամբ, որպէս նշանաբան ունենալով Յիսուսի այս խօսքը, մէկ նախադասութեամբ կ'աղերսէր հայ մայրերուն որ իրենց զաւակները Քրիստոսի մօտեցնեն: Ան Քրիստոսի խօսքով կը սաստեր բոլոր անոնք որոնք տարբեր ձեւերով արգելք կը հանդիսանային որ հայ ազգին մանուկները մօտենան Քրիստոսի:

Այս տարուան ընթացքին, բաղդատած նախորդ տարուան, մեր արձանագրուող աշակերտներուն թիւը 59-էն 45-ի նուազեցաւ եւ իւրաքանչիւր Կիրակի օրուան միջին ներկայութիւնն ալ 42-էն 26-ի: Այս տարուան ընթացքին, ուրախ ենք յայտարարելու, թէ ունեցանք մեծագոյն թիւով (16) Երկրորդական դասարաններու աշակերտներ:

Աստուծոյ կամքով՝ մեր 42-րդ տարեշրջանի վերամուտը, ինչպէս ամէն տարի, կը սկսինք Խաչվերացին որ այս տարի Սեպտեմբեր 12, 2021-ին է:

Ժամանակը ցոյց պիտի տայ եթէ պիտի կարենանք մեր գործունէութիւնը շարունակել ըստ սովորականին, թէ պէտք է առցանց տարփերակներ գտնենք:

Տնօրէնութիւն եւ Ուսուցչական Կազմ

www.sourphagop.org

Մեր կայքէջը համացանցի վրայ իր գոյութեան 21-րդ տարին մտաւ 2020-ի Սուրբ Յակոբի օրը: Տարիներու ընթացքին նորոգեցինք մեր կայքէջին տեսքը ու ճոխացուցինք անոր բովանդակութիւնը: Մեր կայքէջին գրքերու բաժնին մէջ կը գտնէք Ազգապատում (Ա. Բ. եւ Գ. հատորներ), Ժամագիրք, Սբ. Պատարագ, Կրօնական Գիտելիքներ, Պատարագամատոյց եւ Քրիստոնէայ Հայաստան հատորները, երգեր, շարականներ, «Մաշտոցի Արձագանգ»-ի բոլոր թիւերը, եւ այլն:

Այս տարեշրջանին, մեր կայքէջի վերանորոգման աշխատանքին ձեռնարկեցինք: Նոր կայքէջին պատասխանատուն է Առէն Պապիկեանը եւ յոյսով, վերամուտին պատրաստ կ'ըլլայ:

ՀԱԿԻՐՃ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ 2020-21 ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ՄԱՍԻՆ

Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցը կը վայելէ եկեղեցւոյ հովանաւորութիւնը:

41-ամեակ Կիրակնօրեայ Դպրոցին

2020-21 տարեշրջանը 41-րդ տարեշրջանն էր: Կիրակնօրեայ Դպրոցը սկսաւ իր գործունէութիւնը Խաչվերացի Կիրակին 14 Սեպտեմբեր 1980-ին եւ յաջորդական 41-րդ տարեշրջանը բոլորեց այս տարի (անշուշտ հաշուի առնելով թէ Նոյեմբեր 22, 2020-էն ետք երկրորդականը միայն առցանց կազմակերպեց իր դասընթացքները): Այս տարեշրջան սկսաւ Կիրակի՝ 13 Սեպտեմբեր 2020-ին եւ տեւեց մինչեւ Մայիս 30, 2021: Դասաւանդութիւնները տեղի կ'ունենան ամէն Կիրակի օրերը 10:30-13:00: Այս տարի Դպրոցը ունեցաւ մանկապարտէզի 3, նախակրթարանի 6 դասարաններ ինչպէս նաեւ երկրորդականի 4 դասարաններ, որոնք գործեցին 7 խմբաւորութիւնով:

28-ամեակ «Մաշտոցի Արձագանգ»-ին

Մեր 2020-21 տարեշրջանի ընթացքին նաեւ՝ 28-րդ տարին ըլլալով, հրատարակեցինք մեր պարբերաթերթ «Մաշտոցի Արձագանգ»ը՝ ամսական դրութեամբ: «Մաշտոցի Արձագանգ»ը կը տպուի եւ PDF ձեւով կը կարդացուի աշխարհի 5 ցամաքամասերուն վրայ

http://www.sourphagop.org/մաշտոցի_արձագանգ էջին վրայէն:

21-ամեակ www.sourphagop.org-ին

10 Դեկտեմբեր 2000-ին, Սուրբ Յակոբի տօնին օրը, դպրոցը ունեցաւ իր կայքէջը՝ www.sourphagop.org-ը: Մեր կայքէջը ունի հետեւեալ բաժինները.

Մեր մասին, Սուրբեր, Տօներ, Գիրքեր (ուր կրնաք գտնել մեր դասագրքերը, Ազգապատումը իր 3 հատորներով, Բառարան, Եկեղեցական Բառարան, Սուրբ Պատարագը, Ժամագիրքը, Գրաբար Նոր Կտակարանը եւ Կրօնական Գիտելիքները), Ժամանակացոյց, «Մաշտոցի Արձագանգ» ի բոլոր թիւերը, Հայերէն տառատեսակ, Ճաշու Աւետարան, Տօներ, Պարբերաթերթ, Կապեր, Կարծիքդ, Խաղեր, Զարգացման Մրցում, Church Timeline, Daily Bible:

Ս. Ծննդեան ճրագալոյցի ընթերցումներ

Կիրակնօրեայ Դպրոցը պատրաստեց տեսերիզ մը ուր 10 աշակերտներ կատարեցին մարդգարեական ընթերցոյթները: Տեսերիզը սփռուեցաւ Յունուար 5, 2021-ին եկեղեցւոյ կայքէջէն:

Առաքելական նամակներու հայերէն եւ Ֆրանսերէն ընթերցումներ:

Յունուար 31-էն մինչեւ Ապրիլ 4, 2021 Կիրակնօրեայ Դպրոցի ուսուցիչները տեսերիզով ներկայացուցին Կիրակի Օրերու Առաքելական նամակներու ընթերցումները Հայերէն եւ Ֆրանսերէն լեզուներով:

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՎԻՃԱԿ

2020-21 տարեշրջանին արձանագրուած աշակերտութեան թիւը 46 էր, իսկ շաբաթական ներկայութիւնն էր 26՝ բաժնուած 7 խումբերու:

ԿԱԶՄ

Կիրակնօրեայ Դպրոցի 2020-21 տարեշրջանին ունեցանք 6 տարբեր բաժանումներ հետեւեալ ձեւով.

Խումբ

Բողբոջ, Կոկոն եւ Ծաղիկ
Նախակրթարան Ա.
Նախակրթարան Բ.
Նախակրթարան Գ. եւ Դ.
Նախակրթարան Ե. եւ Զ.
Երկր. Ա. եւ Բ.

Դաստիարակ

Շողիկ Թեհինեան,
Յասմիկ Նաճարեան
Թալին Բարսեղեան
Թամար Գիզիրեան
Շողիկ Նաճարեան
Միւր Պանքեան եւ
Ալեքս Տեմիրճեան
Առէն Պապիկեան եւ
Սդեֆան Տեմիրճեան
Մեւակ Պապիկեան եւ
Բասգալ Տեմիրճեան
Րուբինա Գարամինասեան
Թորոս Պապիկեան
Թորոս Պապիկեան եւ
Առէն Պապիկեան
Հրակ Պանքեան
Թորոս Պապիկեան

Երկրորդական Գ. եւ Դ

Երգերու եւ շարականներու ուսուցում

Երկրորդականի մասնաւոր Ծրագիր
«Մաշտոցի Արձագանգ»
Կայքէջի պատասխանատու

Տնօրէնի Օգնական
Տնօրէն

Կազմը գումարեց ժողովներ, որոնց ընթացքին արժարձուեցան ծրագրային, կարգապահական, արտադասարանային աշխատանքներու վերաբերող եւ այլ նիւթեր:

ԴՊՐՈՑԻ ԱՌՕՐԵԱՆ

2020-21 տարեշրջանին Կիրակնօրեայ Դպրոցի առօրեան ընթացաւ Հայաստանեայց Եկեղեցոյ Կիրակնօրեայ Դպրոցներու դասաւանդական հիմնական կառուցուածքին համաձայն՝ լսարանային եւ դասարանային բաժանումներով, ուր դասաւանդուեցան Ս. Գրային, ծիսական, բարոյագիտական եւ գործնական ծանօթութիւններ, գիտելիքներ եւ աղօթքներ:

Լսարանային բաժին


Տէրունական աղօթքի, մաղթանքներու եւ Կիրակնօրեայ Մաղթերգէն ետք, աշակերտները բաժնուեցան իրենց խումբերուն: Պահերը ընթացան հետեւեալ ձեւով.

- Ոսկեղէն համարներու կամ Սաղմոսներու ուսուցում
- Բարոյալից պատմուածքներու ներկայացում
- Կրօնական երգերու եւ շարականներու ուսուցում
- Ճաշու Աւետարանի ընթերցում եւ մեկնաբանութիւն
- «Մաշտոցի Արձագանգ»-ի սերտողութիւն:


Դասարանային բաժին

Դասաւանդուեցաւ ըստ դասագիրքերու:

Աշակերտական Ներկայութեան Տախտակներ



2020-21 տարեշրջանի իւրաքանչիւր դասարանի արձանագրութիւն եւ միջին ներկայութիւն



2020-21 տարեշրջանի իւրաքանչիւր Կիրակի օրուայ ներկայութիւն

| <p align="center">ՁԵՌՆԱՐԿՆԵՐ ԵՒ ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ</p> | |
|---|---|
| 12 Յուլիս 2020 | Օրհնութեան Գիր՝ Կիրակնօրեայ Դպրոցի 40-ամեակի առիթով |
| 5 Սեպտեմբեր 2020 | Ներկայացում՝ «Պատանիին Աստուածաշունչը» |
| 13 Սեպտեմբեր 2020 | Տարեսկիզբ եւ վերամուտ |
| 20 Սեպտեմբեր 2020 | Վարժարանի աշակերտութիւնը մասնակցեցաւ Սուրբ Պատարագի խորհուրդին եւ հաղորդութիւն ստացաւ |
| 11 Հոկտեմբեր 2020 | Թարգմանչաց տօնին յատուկ յայտագիր |
| 5 Յունուար 2021 | Երկրորդականի աշակերտները Ս. Ծննդեան ճրագալոյցի պատշատեցումով ընթերցումներ առցանց մատուցեցին |
| 14 Փետրուար 2021 | Վարդանանց եւ Բուն Բարեկենդան տօներու յատուկ տօնակատարութիւն |
| Դպրոցը Մեծ Պահքի շրջանին ունեցաւ իր աշակերտական պահքի հետեւեալ ժամանակացոյցը. | |
| Ա. շաբաթ | Chips |
| Բ. շաբաթ | Հեռատեսիլ, համակարգիչ, այլ պաստառով խաղեր |
| Գ. շաբաթ | Տուրմ |
| Դ. շաբաթ | Կազային խմիչքներ |
| Ե. շաբաթ | Շաքար |
| Զ. շաբաթ | Ծամոն |
| Է. շաբաթ | Հակիթ |
| 9 Մայիս 2021 | Մայրերու տօն |
| 16 Մայիս 2021 | Համբարձումի յիշատակութիւն |
| 23 Մայիս 2021 | Հոգեգալուստ Պետեկոստէ |
| 30 Մայիս 2021 | Հայաստանի անկախութիւն եւ Տարեփակ |
| | |

Կիրակնօրեայ Դպրոցի 40-Ամեակի առիթով

Կիրակի, 12 Յուլիս 2020-ին, Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ մէջ, յաւարտ պատգամի, Առաջնորդ սրբազանը՝ Գերշ. Տ. Բարգէն արքեպիսկոպոս Ս. Յակոբ Կիրակնօրեայի 40-ամեակին առիթով, Օրհնութեան Գիր յանձնեց տնօրէնին՝ Բրշ. Թորոս սրկ. Պապիկեանի: Գնահատեց կրթական մշակ՝ օրդ. Թամար Գիգիրեանը: Իսկ հովիւի եւ հոգաբարձութեան կողմէ յուշատախտակով գնահատուեցան վաստակաւոր մշակներ տիկ. Շողիկ եւ օրդ. Յասմիկ Նաճարեան: Տնօրէնն ալ՝ ինկամանով մը:



Ներկայացում «Պատանիին Աստուածաշունչը»

PowerPoint Ներկայացում «Պատանիին Աստուածաշունչը»

Կը ներկայացնէ Ս. Յակոբ Եկեղեցոյ Կրթակնօրեայ դպրոցի ուսուցիչ Պն. Առէն Պապիկեան:

Իզայասնիցի սբատանկի եւ պատաստեհի պիտի տուիլ ինչ «Պատանիին Աստուածաշունչը»: Անոնց տուիլման հովանաւորներն են Տէր եւ Տիկ. Կարօ եւ Սաջի Շահինեան:



Պատանիին Աստուածաշունչը

Շաբաթ, 5 Սեպտեմբեր 2020-ի, երեկոյան ժամը 6:30-ին, Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցոյ մէջ, յետ կարճատեւ ժամերօրութեան:


Շաբաթ, 5 Սեպտեմբեր 2020-ի երեկոյան 6.30-7.30, Ս. Յակոբ Առաջ. Մայր Եկեղեցոյ մէջ շատ հետաքրքրական ներկայացումը կատարուեցաւ «Պատանիին Աստուածաշունչը»ին: Ներկայացումը նաեւ սփռուեցաւ առցանց եկեղեցոյ Դիմատետրի եւ YouTube-ի համացանցի էջերէն: Ներկայացնողն էր Ս. Յակոբ Կիրակնօրեայի ուսուցիչ դպիր Առէն Պապիկեան: Յայտագրի սկիզբին, բացման խօսք կարդաց 2020-ի Կիրակնօրեայ Դպրոցի աւարտական եւ 2020-21 տարեշրջանի տնօրէնի օգնական Հրակ Պանքեան: Ան նաեւ գիրքէն դրուագներ քաղեց տարբեր պահերու: Ներկայ մանուկներուն եւ պատանի պատանուհիներուն նուէր տրուեցան «Պատանիին Աստուածաշունչը»էն: Հովանաւորն էին Տ. եւ Տիկ. Կարօ եւ Սալբի Շահինեան:



2021 Ս. Ծննդեան Ճրագալոյցի Պատշաճեցուած ընթերցումներ
Մատուցմամբ մեր Աշակերտներուն



Ընթերցում
Ելից Գիրքէն
Ընթերցող՝ Յարութ Թաշճեան



Ընթերցում
Ելից Գիրքէն
Ընթերցող՝ Կարոյան Լազարեան



Ընթերցում
Ելից Գիրքէն
Ընթերցող՝ Այտա Արապաթեան



Ընթերցում
Միգիա Մարգարեի Գիրքէն
Ընթերցող՝ Կարօ Սարգիսեան



Ընթերցում
Առակներու Գիրքէն
Ընթերցող՝ Սիեր Ստեփանեան




Ընթերցում
Եսայի Մարգարեի Գիրքէն
Ընթերցող՝ Ալիք Արշակեան



Ընթերցում
Եսայի Մարգարեի Գիրքէն
Ընթերցող՝ Բրիտտ Իսթիպաթ



Ընթերցում
Եսայի Մարգարեի Գիրքէն
Ընթերցող՝ Յարութ Գույճեան



Ընթերցում
Եսայի Մարգարեի Գիրքէն
Ընթերցող՝ Սարին Խշիշեան



Ընթերցում
Եսայի Մարգարեի Գիրքէն
Ընթերցող՝ Գեորգ Սարգիսեան

Յունուար 5, 2021-ին Սուրբ Ծննդեան Խթման Մարգարեական ընթերցումները առցանց կատարեցին մեր աշակերտները :

Վ ի տ է օ ն պատրաստուած էր Առէն Պապիկեանին կողմէ:

Կիրակի օրերու Առաքելական նամակներու ընթերցումներ հայերէն եւ ֆրանսերէն լեզուներով մատուցմամբ մեր ուսուցիչներուն

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵՎԵՂԵՑԻՈՅ
ՍՈՒՐԻ ԶԱՎԻՐ
ԿԻՐԱԿՈՐԵԱՅ ԴՐՈՒՅ

Ընթերցում Պողոսի Առաքեալի կողմէ Տիմոթէոսի գրուած երկրորդ նամակէն
Նախ հայերէն, ապա ֆրանսերէն

Ընթերցող՝ Իրակ Պանգեան

Lecture de la deuxième épître à Timothée de Saint Paul Apôtre
D'abord en arménien, puis en français

Lecteur: Hrag Bankian



ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵՎԵՂԵՑԻՈՅ
ՍՈՒՐԻ ԶԱՎԻՐ
ԿԻՐԱԿՈՐԵԱՅ ԴՐՈՒՅ

Ընթերցում Եսայի Մարգարէի գիրքէն
Նախ հայերէն, ապա ֆրանսերէն

Ընթերցող՝ Ալէք Տեմերճեան

Lecture du livre d'Isaïe le Prophète
D'abord en arménien, puis en français

Lecteur: Alex Demerdjian



ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵՎԵՂԵՑԻՈՅ
ՍՈՒՐԻ ԶԱՎԻՐ
ԿԻՐԱԿՈՐԵԱՅ ԴՐՈՒՅ

Ընթերցում Պողոսի Առաքեալի կողմէ Հռոմայեցիներուն գրուած նամակէն
Նախ հայերէն, ապա ֆրանսերէն

Ընթերցող՝ Սեւակ Պապիկեան

Lecture de l'épître aux romains de Saint Paul Apôtre
D'abord en arménien, puis en français

Lecteur: Sevag Babikian



ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵՎԵՂԵՑԻՈՅ
ՍՈՒՐԻ ԶԱՎԻՐ
ԿԻՐԱԿՈՐԵԱՅ ԴՐՈՒՅ

Ընթերցում Պողոսի Առաքեալի կողմէ Հռոմայեցիներուն գրուած նամակէն
Նախ հայերէն, ապա ֆրանսերէն

Ընթերցող՝ Ստեփան Տեմերճեան

Lecture de l'épître aux romains de Saint Paul Apôtre
D'abord en arménien, puis en français

Lecteur: Stephan Demerdjian




ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵՎԵՂԵՑԻՈՅ
ՍՈՒՐԻ ԶԱՎԻՐ
ԿԻՐԱԿՈՐԵԱՅ ԴՐՈՒՅ

Ընթերցում Պողոսի Առաքեալի կողմէ կորնթացիներուն գրուած երկրորդ նամակէն
Նախ հայերէն, ապա ֆրանսերէն

Ընթերցող՝ Մհեր Պանգեան

Lecture de la deuxième épître aux Corinthiens de Saint Paul Apôtre
D'abord en arménien, puis en français

Lecteur: Mhair Bankian



ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ ԵԿԵՂԵՑՈՑ ԱՌՈՒՐ ԶԱԿՈՐ ԿԻՐԱԿՆՈՒԹԵԱՑ ԴՊՐՈՑ

Ընթերցում Պողոսի Առաքելի կողմէ Եփեսացիներուն գրուած նամակէն
Նախ հայերէն, ապա ֆրանսերէն
 Ընթերցող՝ Ատեն Պապիկեան

Lecture de l'épître aux Éphésiens de Saint Paul Apôtre
D'abord en arménien, puis en français
 Lecteur: Aren Babikian



ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ ԵԿԵՂԵՑՈՑ ԱՌՈՒՐ ԶԱԿՈՐ ԿԻՐԱԿՆՈՒԹԵԱՑ ԴՊՐՈՑ

Ընթերցում Պողոսի Առաքելի կողմէ Փիլիպպեցիներուն գրուած նամակէն
Նախ հայերէն, ապա ֆրանսերէն
 Ընթերցող՝ Դրակ Պանդեան


Lecture de l'épître aux Philippiens de Saint Paul Apôtre
D'abord en arménien, puis en français
 Lecteur: Hrag Bankian



ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ ԵԿԵՂԵՑՈՑ ԱՌՈՒՐ ԶԱԿՈՐ ԿԻՐԱԿՆՈՒԹԵԱՑ ԴՊՐՈՑ

Ընթերցում Պողոսի Առաքելի կողմէ Կողոտացիներուն գրուած նամակէն
Նախ հայերէն, ապա ֆրանսերէն
 Ընթերցող՝ Արեւիկա Տեմիզեան

Lecture de l'épître aux Colossiens de Saint Paul Apôtre
D'abord en arménien, puis en français
 Lecteur: Stephan Demerdjian



ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ ԵԿԵՂԵՑՈՑ ԱՌՈՒՐ ԶԱԿՈՐ ԿԻՐԱԿՆՈՒԹԵԱՑ ԴՊՐՈՑ

Ընթերցում Պողոսի Առաքելի կողմէ Փիլիպպեցիներուն գրուած նամակէն
Նախ հայերէն, ապա ֆրանսերէն
 Ընթերցող՝ Ալեք Տեմիզեան

Lecture de l'épître aux Philippiens de Saint Paul Apôtre
D'abord en arménien, puis en français
 Lecteur: Alex Demerdjian



ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ ԵԿԵՂԵՑՈՑ ԱՌՈՒՐ ԶԱԿՈՐ ԿԻՐԱԿՆՈՒԹԵԱՑ ԴՊՐՈՑ

Ընթերցում Գործք Առաքելոց Գիրքէն
Նախ հայերէն, ապա ֆրանսերէն
 Ընթերցող՝ Միտր Պանդեան

Lecture du Livre des Actes des apôtres
D'abord en arménien, puis en français
 Lecteur: Mhair Bankian



ՆԿԱՐՆԵՐ՝ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅԻ 2020-21 ՏԱՐԵՇՐՋԱՆԷՆ





































ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ

ԻՇ. ՏԱՐԻ

«ՄԱՇՏՈՑԻ ԱՐՁԱԳԱՆԳ»ի

ներկայ եւ նախկին թիւերը կը գտնուին նաեւ
համացանցին վրայ

www.sourphagop.org/մաշտոցի_արձագանգ

Ջայաստանեայց Եկեղեցւոյ

Սուրբ Յակոբ

Կիրակնօրեայ Դպրոցի

2020-21 տարեշրջանի կազմը

Հրակ Պանքեան

Ալեքս Տեմիրճեան

Սդեֆան Տեմիրճեան

Մհեր Պանքեան

Սեւակ Պապիկեան

Բասգալ Տեմիրճեան

Շողիկ Թեհինեան

Առէն Պապիկեան

Թամար Գիզիրեան

Բուրինա Գարամինասեան

Յասմիկ Նաճարեան

Շողիկ Նաճարեան

Թալին Բարսեղեան

Թորոս Պապիկեան